Ազգ. Հինգշաբթի 25 Հոկտ. 2001

ԱԼԻՔ ՕՐԱԹԵՐԹ, ԹԻՒ 224 (18446)

# ՀՀ Նախագահ Ռ. Քոչարեանը Պարգեւատրեց Հայաստանի Ամերիկեան Համալսարանի Գիտական-Կրթական Գործիչներին

(Ճարտ. Արմէն Կիւրեղեանը պարգեւատրուեց Մովսէս Խորենացի շքանշանով)

2001 թ. Հոկտ. 8-ին Երեւանում մեծ շուքով տօնեց Հայաստանի ամերիկեան համալսարանի (ՀԱՀ) 10-ամեակը: Այդ համալսարանը հիմնադրուել է Հայաստանի կառավարութեան, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալութեան, Լինսի հիմնադրամի եւ Կալիֆորնիայի համալսարանի համատեղ ջանքերով եւ շուրջ տաս տարի է գործում է Երեւանում:

Այդ հանդիսութեան առթիւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ռոբերտ Քոչարեանը «Մովսէս Խորենացի» շքանշանով պարգեւատրեց այդ համալսարանի մի շարք գիտական-կրթական գործիչների, որոնք մեծ աւանդ են ներդրել անցեալ տասը տարիներում Հայաստանի ամերիկեան համալսարանի գործունէութեան բարգաւաճման բարձրորակ մասնագէտներ կրթելու եւ հայ-ամերիկեան գիտական, կրթական կապերի զարգացման ուղղութեամբ:



Պարգեւատրուողներն էին համալսարանի պատուոյ նախագահ՝ դոկտ. Միհրան Աղբաբեանը, համալս. նախագահ՝ դոկտ. Յարութիւն Արմէնեանը եւ ճարտարագիտական ֆակուլտետի վարիչ, ընիկ իրանահայ պրոֆ. Արմէն Տ. Կիւրեղեանը*), որը միաժամանակ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Բերքլի» համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետի ղեկավարն է:

Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը ոսկէ մեդալով պարգեւատրեց համալսարանի մի խումբ դասախօսների, իսկ ամերիկեան համալսարանն իր առաջին շքանշանը յետմահու շնորհեց Վիլիկ Յարութիւնեանին, ում կրթութեան եւ գիտութեան նախարար լինելու ժամանակ էլ հիմնադրուել է համալսարանը.

Այդ հանդիսութեան յաջորդ օրը՝ Հոկտ. 9-ին տեղի ունեցած համալսարանի աւարտական հանդիսութեան ընթացքում, համալսարանի կողմից պարգեւատրուեցին դոկտ. Մովակ Աւագեանը, պրոֆ. Էդուարդ Աւետիսեանը, դոկտ. Ֆուլլերը եւ պրոֆ. Իւրի Սարգսեանը.

---

*) Որդին՝ իրանահայ շնորհալի գեղանկարիչ հանգուցեալ Սմբատ Տ. Կիւրեղեանի:

## ԴԻՏԱՆԿԻՒՆ

Միջազգային ահաբեկչութեան դէմ Միացեալ Նահանգ[illegible]

## Քաղաքական ...

OCT 29 '01 11:52 O&R CONSULTANTS
10/29/2001 14:32 51284051049 BROTHERIV ARMENIA PAGE 01